

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزتاك** جريدة يومية سياسية وأدبية - المبرة السؤولة، إنشاء ترويشستان

1500 Լ.Ո. 75ԲԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 96 (21146) ՀԻՆԳՇԱՐԹԻ, 4 ՅՈՒԼԻՍ 2002 10 ԷՋ

ՍԹՐՈ ՀՆԳԿԱՍՏԱՆ ԵՒ ԻՍԼԱՄԱՊԱՏ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

Անգլիոյ արտաքին գործոց նախարար ձեք Սթրո այս ամսուան վերջերը պիտի այցելէ Հնդկաստան եւ Փաքիստան, երկու երկիրներուն միջեւ լարուածութիւնը մեղմացնելու առաջադրանքով:

Պաշտօնատարներ ըսին, որ Սթրո պիտի այցելէ Նի Տէյիի եւ Իսլամապատ Չինաստան, ձափոն եւ Հոնկ Բոնկ իր այցելութենէն վերադարձին: Անոնք յստակ թուական մը չտուին:

Պաշտօնատարները նաեւ ըսին, որ Սթրո կ'ուզէ ցոյց տալ միջապագային ընտանիքին յանձնառութիւնը՝ Հնդկաստան - Փաքիստան համակարգի պատերազմ մը կանխարգիլելու համար:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՈՒԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ՎՐԱՅ


Կ'ԸՍԵ ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ

Ամերիկեան Մերակոյտի գաղտնի սպասարկուածներէն հարցերու յանձնախումբի պատուիրակուածները յանձնախումբի նախագահ ծերակուտական Պոպ Կրէյնի միջոցով խառնուրդներու երէկ այցելեց նախագահ Գոր. Էմիլ Լահուտի, խորհրդարանի նախագահ Նեպիհ Գըրբիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի:

Պատուիրակուածներու մաս կը կազմեն ծերակուտականներ Մայք Տուէյն, Իվան Պայէ եւ անոնց օգնականները. հանդիպումներուն ներկայ գտնուեցան Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պէթլը եւ դեսպանատան գործադիր Բարոլ Գալին:

ՊԱՍՏԱՅԻ ՄԵՋ

Նախագահ Գոր. Էմիլ Լահուտ հանդիպումներ ընթացքին ամերիկեան պատուիրակուածներու հետ: Նախագահը իր կարգին չէ նախագահ ծործ Պոլէրի անցեալ շաբաթ յայտարարած գաղափարները Միջին Արեւելքի մէջ տիրող լարուած իրավիճակին վերջ դնելու ծրագիր նկատել, որովհետեւ պայթուցիկ վիճակին վերջ դնող անմիջական



Նախագահ Լահուտ կ'ընդունի Կրէյնը

լուծում չի ներկայացնել, այլ միայն գաղափարներ ապագային համար:

«Մեր փափաքը շրջանին մէջ վատթարացումն է, որովհետեւ ժամանակը շուտ կ'անցնի ի հեճուկս շրջանին մէջ արդար խաղաղութեան յոյսերուն: Իսկ նման խաղաղութեան պէտք է հիմնուի միջազգային, որոշումներուն վրայ», ըսաւ նախագահ Լահուտ եւ կոչ ուղղեց Միջին Արեւելքի խաղաղութեան քառանկամ յանձնախումբին հովանաւորութիւն ընձեռելու, որ պիտի կատարէ անհրաժեշտ հաղորդակցութիւնները՝ նախապատրաստելու տազանակար Լուծում միջազգային խորհրդակցութիւն, որուն պէտք է մասնակ-

ցին առնչութիւն ունեցող բոլոր կողմերը: «Խորհրդակցութիւնը ընթացքին պէտք չէ անտեսուի արդար իրաւունքները, իսկ ան որ կը կարծէ, թէ ուժը լուծում կը բերէ, կը սխալի շարաչար, որովհետեւ միակ էլքը բանակցութիւններով ՄԱԿի որոշումներու գործադրութիւնն է, այլապէս պիտի շարունակուի վայրագութեանց ալիքը», ըսաւ ան:

Շար.՝ Էջ 10

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԵՕԹԸ ԲԱՂԱՔՆԵՐՈՒ ՄԵՋ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿՐԱԿՄԱՐԸ ԿԸ ԶՆՋՈՒԻ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն եւ ապահովութեան հարցերու դաշինքը երէկ որոշեցին ջնջել պաղեստինեան եօթը քաղաքներու մէջ հաստատուած ցերեկային կրակամարը: Շարոնի խորհրդատու Ռասան Կիսին ըսաւ, որ բանակը պիտի ջնջէ ցերեկային կրակամարը, որպէսզի կարելի դառնայ աստիճանական կերպով վերահաստատել բնականոն կեանքի ընթացքը: Կիսին աւելցուց, որ իսրայէլեան բանակի հրամանատարներուն կը մնայ որոշել երբ ջնջել կաշկանդումները:

Արտաքին գործոց նախարար Շիմոն Փերես ըսաւ, որ իսրայէլի կրակամարը կրակամարի վերջնական կարգաւորումը մը: Փերես այս կեցուածքը որդեգրած էր կառավարութեան նիստին, ուր քննարկուեցան պա-



Իսրայէլացի զինուորներ կը հսկեն Եսաէր Արաֆատի կեդրոնատեղիին դիմաց

ղեստինեան շրջաններուն հանդէպ միջոցառումները: Իսրայէլ որոշեց հաստատ պահել գիշերային կրակամարի դրութիւնը՝ իրենց տուններուն մէջ բանտարկուած պահելով եօթը հարիւր հազար պաղեստինցիներ: Նապոլու, Թուլ-

քարմ, Բէթղեհէմ, Ռանիս եւ Հէպրոն իսրայէլեան բանակին կողմէ վերագրուեցան երկու շաբաթ առաջ, իբրեւ հակադարձութիւն պաղեստինեան անձնասպանական գործողութիւններուն: Կիսին ըսաւ նաեւ,

որ բանակը պիտի փորձէ նուազեցնել իր ներկայութիւնը պաղեստինեան քաղաքներուն մէջ՝ մեղմացնելու համար ընդհանուր լարուածութիւնը, ինչպէս նաեւ՝ արտօնելու համար մարդա-

Շար.՝ Էջ 10

ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ՊԻՏԻ ՆՇԵՆ ԽԻՍՏ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Մինչ Մ. Նահանգներ այսօր կը պատրաստուին անկախութեան տօնը նշելու, իշխանութիւնները ապահովական խիստ միջոցառումներու դիմած են՝ կանխարգիլելու համար սիւրբերկանական բնութիւն ունեցող զէպ:



Եզերապահ Գաւ մը կը հսկէ Ազատութեան արձանին դիմաց

Սպիտակ Ձոււնը երէկ յայտնած է, որ պիտուորական օդանավեր թռիչք պիտի կատարեն Մ. Նահանգներու վերելքի պաշտպանելու համար ամերիկացիք: Ապահովութեան միջոցառումներու շարքին պիտի ըլլան՝ ուստիկաններու թիւի բարձրացում, ԷՖ. Պի. Ալի ներկայութիւն, ինչպէս նաեւ երկրին տարածքին աւելի քան 2000 հանդիսութիւններու պատասխանատուն նկատուող Մոհամեդ Աթթա ներու յատուկ հսկողութիւն: Սպիտակ Ձոււն Հայրենիքի Ապահովութեան Գրասենեակին կողմէ, որ հաստատուած էր Սեպտեմբեր 11 յարձակումներէն ետք:

Թունաթի մէջ բարձրաստիճանի պիտուորական մը յայտնած է, թէ պիտեւները չէլէններ եղած են, եւ թէ անոնք «հաւանաբար սիւրբերկանական առաքելութեամբ մը» կը պատրաստուէին Քոնսթանտինոպոլ քաղաքներուն վրայ յարձակելու: Մ Է կ ն ա բ ա ն ն եր կ'ըսեն, թէ Փաքիստան, որ Մ. Նահանգներու սիւրբերկանական պատերազմին բանալի մէկ դաշնակիցն է, կը թուի վերջերս թափուած ըլլալ «Բալիտա» եւ Թալեպան փախստականներու հետապնդումներուն:

ՓԱՔԻՍՏԱՆԻ ՄԵՋ ԴԵՊԵ

Մինչ այդ, Փաքիստանի հիւսիսարեւմտեան Քոնսթաքաղաքին մօտ երէկ բախում մը տեղի ունեցած է ենթադրաբար «Բալիտա» ցանցի անդամներու եւ ապահովութեան ուժերու միջեւ: Այս վերջինները 3 կողմ տուած են եւ «Բալիտա»ի 4 կասկածելիներ սպանուած են:

Շար.՝ Էջ 3

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԻՐԱՆԻ ԴԵՍՊՈՒՆԻՆ

Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամներ իրարմէջ շարքերու եւ Հրաչ Թադեւոսեան այցելեցին Հայաստանի մէջ իրանեան դեսպանատուն եւ տեսակցութիւն մը ունեցան դեսպան Մոհամէտ Ֆարհատ Քոլէյնիի հետ:

Հանդիպումին Է. Ղազարեան եւ Հ. Թադեւոսեան Քոլէյնիի ներկայացուցին Հ. Յ. Դաշնակցութեան դիրքորոշումները՝ Հայաստանի ներքին քաղաքական գործարարներուն վերաբերեալ: Նաեւ քննարկումի առարկայ դարձան Հարաւային Կովկասի իրադարձութիւնները եւ Լեռնային Ղարաբաղի տագնապին առնչուող հարցեր:

ՀԱՅԱՍՏԱՆ – Ե. ԽՈՐՀՈՒՐԴ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի Ազգային Ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Յովհաննէս Յովհաննիսեան յայտարարեց, թէ Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի ընդհանուր քարտուղար Վալթէր Շուիմըր Յուլիս 9-10ին Հայաստան պիտի այցելէ: Ան պատասխանատուներու հետ պիտի քննարկէ Լեռնային Ղարաբաղի տագնապը, Հայաստան - Եւրոպական խորհուրդ յարաբերութիւնները, ինչպէս նաեւ շրջանային համագործակցութեան հեռանկարները: Յովհաննիսեան տեղեկացուց, որ Շուիմըր աշնան անգամ մը եւս պիտի այցելէ Հայաստան, Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Փիթըր Շիտըրի ընկերակցութեամբ:

ԹՈՒՐԵՒ

ԷՆԵԻԹ ՅՐԱԺԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿ ՉՈՒՆԻ

ԱՆԳԱՐԱ, 3 (ՌՈՅԹԸՐԶ).- Թուրքիոյ հիւանդ վարչապետ Պիլէնթ Էնեւիթ Չորեքշաբթի օր հրապարակուած հարցազրոյցի մը մէջ պնդած է, որ հրաժարելու նպատակ չունի՝ մարտահրաւէր ուղղելով անոնց, որոնք իր հրաժարումը կը պահանջեն՝ զինք ստակալել փորձելով:

Էնեւիթ անցնող 2 ամիսներուն երկու անգամ հիւանդանոց մնացած է: Ան տակաւին իր աշխատանքը լիովին չէ վերստանձնած՝ քաղաքական «պարագա»ի մը եւ երբեք կուսակցութիւններէ քաղկացած կառավարական ընկերակցութեան մէջ հետզհետէ աւելի տարակարծութիւններու գծով մտավախութեանց դուռ բանալով:

Էնեւիթ ըսած է, որ չէ հրաժարած, որովհետեւ չ'ուզեր կառավարական տագնապ մը ստեղծել կամ ճշդուած թուականէն (Ապրիլ 2004) առաջ կանխահաս ընտրութիւններու դուռ բանալ:

ՃԱՇԱՐԱՆ ՈՒՄՏԻ ԷԼ ՍԱՄԱՐ

(ժուրտ էլ Պալուք, Պալիմն դէպի Պրումանայի ձամբուն վրայ)

ԳԵՂԱՏԵՍԻԼ ՎԱՅՐ, ԾԱՌԱՋԱՐԳ, ՀԱՆԳԱՐՏ ՄԻՋԱԿԱՅՐ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԹՆՈՒՈՐՏ

- Միշտ առատ եւ թարմ աղանդեր, համադրած ճաշեր, սակ մէկ անձի 85: Խմիչքը՝ ըստ ապսպրանքի:
 - Հայկական, արաբական եւ երոպական երաժշտութիւն:
 - Ամեն Շաբաթ երկուցերը յատուկ յայտագիր հանրածանօթ երգիչներու եւ նուագախումբի ընկերակցութեամբ եւ մասնակցութեամբ արաբական պարուկի:
 - Փոքրերու յատուկ խաղավայր:
 - Կը ստանձնենք միութեանական եւ անձնական խրախմանքեր յարմար գիծերով:
- ԾԱՆՈԹ.- Յատուկ ճաշացուցակ, 27 տեսակ բաց աղանդեր, բաց խորոված, բաց խմիչք՝ օդի, գարնջուր եւ զովացուցիչ:
- Մէկ անձի համար միայն 17\$:
 Հեռահայն. 04 - 808707 եւ 03 - 360667:

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆՆԵՐՈՒ ԲԱՐԳԱԲԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ Է

Կ'ԸՍԵ Ս. ՅՈՎԱՆՆԵԱՆ



Երիտասարդության և մարմնակրթության նախարար Սեպուհ Յովնանեան երկ կայանք, որ մարզական միություններու և սենտիքաներու բարգաւաճման աշխատանքը ընթացքի մէջ է՝ վստահեցնելով, որ նախարարութեան նպատակն է մարզական միություններու կացութեան բարելաւումը և սխալներու սրբազրումը, որպէսզի անոնց աշխատանքները աշխուժ վիճակի մէջ ըլլան:

Նախարար Յովնանեան նաեւ հաւաստեց, որ կը շարունակէ հետապնդել ֆետերատիւններու, ակումբներու և երիտասարդական միություններու իր որոշած նիւթական օժանդակութիւններուն վճարման հարցը՝ ընդգծելով, որ 2001 տարուան պետական պիտոստէն մէջ այս նպատակին յատկացուած չորս միլիարդ 1. ոսկիէն ելելու մուտքի նախարարութիւնը ցարդ վճարած է 1,1 միլիարդ 1. ոսկի:

Նախարար Յովնանեան երկ ընդունեց Լիբանանի Ողիմպիական յանձնախումբի նախագահ Կոր. Սուհէյլ Խուրիի, որ յայտնեց, թէ քննարկած են մարմնակրթութեան կապուած հարցերն ու մարզական ակումբներուն մասին վիճակագրական աշխատանքը, որուն նպատակն է օրինական ճիշդ ընթացքի մէջ դնել ակումբները:

Ան նաեւ յայտնեց, որ քննարկած են 2007ի ձմեռային մրցաշարքերու հիւրընկալման ծրագիրը:

Նախարար Յովնանեան նաեւ ընդունեց երեսփոխան Էլիաս Սքաֆի գլխաւորութեամբ Պէքաւի ակումբներու պատուիրակութիւնի մը, որ ներկայացուց իր հարցերն ու կարիքները:

ՄԱՀԱՁԴ

Տէր եւ տիկին Առաքել Տօնիկեան եւ զաւակուհի Տէր եւ տիկին Աւօ Տօնիկեան
Տէր եւ տիկին Յակոբ Տօնիկեան եւ զաւակուհի Տէր եւ տիկին Մանասէ եւ Ալիս Բէշիշեան
եւ զաւակուհի

Քէրթնեան ընտանիք
Անարբեան ընտանիք
Կրակեան ընտանիք
Հաւուհեան ընտանիք
Մարաշեան ընտանիք
Քէշիշեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գոտն իրենց մօր, մեծ մօր, գորանչին եւ հարազատին՝

ԼՈՒՍԻՆ ՏՕՆԻԿԵԱՆԻ (Ծնեալ՝ ԶԵՐԹԷՆԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 3 Յուլիս 2002, երեկոյան ժամը 10:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի յայտն շինգաբթի, 4 Յուլիս, կէսօրէ ետք ժամը 3:00ին, նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուր կ'է հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

• Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
• Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Տորա, «Սեմիրամիս» փողոց, Հինգշաբթի 4, Ուրբաթ 5 եւ Շաբաթ 6 Յուլիսին:

ՄԱՀԱՁԴ

Տիկին Արուսեակ Հաուի (ծնեալ՝ Փիրանեան)
Տիկին Մունա Ժորժ Ապու Թաւան եւ զուտարը
Տէր եւ տիկին Էլիս Ամին Հաուի
Ռոգ Ամին Հաուի
Տէր եւ տիկին Սիմոն Սարգիս Փիրանեան
Պաշտօն ընտանիք
Հրատու ընտանիք
Սաուա ընտանիք
Չոտ ընտանիք
Պու Իգգի ընտանիք
Ժարժուրա ընտանիք
Համամ ընտանիք
Խէյրալլա ընտանիք
Աթալա ընտանիք
եւ համայն ազգականներ կը գոտն իրենց մուսնոյն, եղբոր, քեռայրին եւ հարազատին՝

ԷԼԻԱ ՍԵՒԱՅԻԼ ՀԱՌԻԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 3 Յուլիս 2002ին:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի յայտն շինգաբթի, 4 Յուլիս 2002, կէսօրուան ժամը 12:00ին, յոյն ուղղափառներու Մար Մթըր եկեղեցւոյ մէջ, էջրեֆիէ:

• Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
• Յաւակցութիւնները պիտի ընդունուին Էշրեֆիէի Մար Մթըր եկեղեցւոյ սրահը, Ուրբաթ 5 եւ Շաբաթ 6 Յուլիս առաւօտեան ժամը 10:00էն կէսօրուան ժամը մէկ եւ կէսօրէ ետք ժամը 4:00էն երեկոյան 7:00ը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ Կ'ԱՇԽԱՏԻ ԲԱՐԵԼԱԿԵԼ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Կ'ԸՍԵ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկ «Տէնիսիս» պանդոկին մէջ տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին անդրադարձաւ տնտեսական կացութեան առնչուած բազմաթիւ հարցերու:

Վարչապետ Հարիրի բացատրեց Լիբանանի ընդհանուր պարտքը նուազեցնելու ուղղութեամբ կատարուած ջանքերը՝ վստահեցնելով, որ Լիբանանի մէջ ներդրումներ կատարելու մարտերը հապազիւտ են:

Անդրադառնալով օտար երկիրներու կողմէ արաբական երկիրներու մէջ ներդրումներ կատարելու մարտերը քիչ են, յատկապէս՝ Լիբանանի մէջ:

Հարիրի շեշտեց, որ կառավարութեան նպատակն է անհրաժեշտ ներդրումները եւ նիւթական օժանդակութիւնները ապահովել երկրի տնտեսութեան բարելաւումին համար:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ Կ'ԱՐԳԵԼԱԿԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երկ երեսփոխաններու հետ իր հանդիպումին ընթացքին խօսեցաւ ամբիկեան Շերակոյտի գաղտնի սպասարկութեան յանձնարարութիւնը պատուիրակութեան հետ իր տեսակցութեան մասին՝ ընդգծելով, որ միջխորհրդարանական երկխօսութիւնը կը ցայտն լիբանանացիներու միջև:

Կ'ՈՒՉՈՒԻՆ

• Վարչապետ ոսկերիչներ (սենթեր): Դիմել՝ հեռ. 03-666059:

ԾԱՆՈՒ 3ԱՐԿԱԲԱԺԻՆ

• Տըպայա, High Point մէջ, 3 ընջասնեակ, հիւրասնեակ, ճաշասնեակ, կահաւորուած խոհանոց, 2 բաղնիք, էր ընդ-տիսիոն, «սոլըր սիսթըմ» ջուրի ջեռուցիչ, 4րդ յարկ, գեղատեսիլ դիրք: Գին՝ 75,000 \$: Հեռ. 01-800268:

Կ'ՈՒՉՈՒԻՆ

• Հագուստի վաճառատուն մը կարիքը ունի փորձառու վաճառող օրիորդներու եւ երիտասարդներու: Վճարումի լաւ պայմաններ: Դիմել՝ հեռ. 01-284746:

Կ'ՈՒՉՈՒԻ

• Զուլթի մէջ աշխատելու համար, տիկին մը կամ օրիորդ մը: Մասնագիտութեամբ՝ ձեւագիտուի (haute couture): Դիմել՝ հեռ. 03-847485:

365 ՕՐԵՐԵՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՑԻՆ
Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանան օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տոլար:
Տըր եւ տիկին Անդրանիկ եւ Ֆիմի ՕՇանեան իրենց ծնողաց՝ Պողոս եւ Նարին Օհանեաններու եւ Վահրամ եւ Վիքթորիա Անտոնեաններու յիշատակին՝ 5 Յուլիս:

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.
National Air Conditioner
360\$-էն սկսեալ զանազան վաճառանիշով եւ չափերով «էր Զոնտիսիոններ»
Պուրճ Համուտ - քաղաքապետարանի հրապարակ 2ԵՌԱՁԱՅՆ՝ 01-241000
2րդ մուտք, Սանթըր Պլանքոյէն: Կատարուող ապահովում:



Հարիրի իր խօսքի պահուն

տարեկիք եւ պատասխանատու է բազմաթիւ հարցերու լուծման»: Միւս կողմէ, վարչապետ Ռաֆիք Հարիրի նախագահ Կոր. Էմիլ Լահուտի հետ հեռաձայնային հարցազրուիչութեան մը ընթացքին յայտնեց

Ֆրանսա կատարած իր այցելութեան մասնաւորութիւնները եւ նախագահ Ժաք Շիրաքի հետ իր ունեցած հանդիպումին ընթացքին քննարկուած հարցերը, որոնց իբրեւ արդիւնք Ֆրանսա նախաձեռ-

նեց Լիբանանի օժանդակող երկիրները (Մոնթի, Եւրոպական Միութեան եւ Միջազգային Դրամական Ֆոնտի) հրաւիրել ժողովի մը՝ Փարիզ-2, Վորալիզ կանգնելու համար Լիբանանի տնտեսութեան բարելաւումին համար ի գործ դրուած ճիգերուն:

Հարիրի յայտնեց նաեւ Չատ տուած իր կարծ այցելութեան եւ նախագահ Իտորի Տիի հետ ունեցած իր հանդիպումին մասնաւորութիւնները:

Հարիրի վարչապետարանին մէջ ընդունեց երեսփոխան Կապրիէլ Մըրը, որուն հետ քննարկեց ընդհանուր հարցեր:

Միւս կողմէ, վաղը՝ Ուրբաթ երեկոյան Հարիրի պիտի այցելէ Սէուտական Արաբիա, ուր պիտի տեսակցի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ: Ապա ան պիտի ուղղուի Եգիպտոս, ուր պիտի տեսակցի նախագահ Հիւսնի Մուպարաքի հետ:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՊԸՐՐԻԻ ԵՒ ԲԱՐԱՄԷԻ

Քըրնէթ Շեհուանի Հանդիպումին մէկ պատուիրակութիւնը երկ այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի եւ նախկին վարչապետ Օմար Քարամի, որոնց ներկայացուց մարտիններու միջազգային խորհրդածոյովին արդիւնքները:

Երեսփոխաններ Նախիլա Մուաուատ, Տարես Սուայտ, Մանսուր Դանեմ Պոն եւ տիար Սամիր Ֆրեմիէ տեսակցեցան Պըրրիի հետ: Սուայտ յայտարարեց, որ հանդիպումը Լոս Անձելըսի ժողովի կողքին նաեւ առիթ մըն էր արունակելու երկու տարի առաջ սկսած երկխօսութիւնը: «Հանդիպումը կեդրոնացաւ մարտիններու խորհրդածոյովին վրայ եւ անդրադարձաւ Լիբանանի մէջ կարգ մը քաղաքագէտներու կատարած փութկոտ յայտարարութիւններուն, որոնք ծանօթ չէին ժողովի բանա-

Շաբ-ը՝ էջ 10

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

• Տիգրան Արապեանի մահուան առիթով, LOԽի «Ա. Փափագեան» մասնաձիւղին կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները. Տըր եւ տիկին Արահամ Բագլայեան 30,000 լ. ո., տըր եւ տիկին Լեւոն Կարապետեան 20,000 լ. ո., տըր եւ տիկին Նորայր Բագլայեան 20,000 լ. ո. եւ տըր եւ տիկին Գեղամ Գուլումեան 25,000 լ. ո.
• Տիկին Մարի Բարսեղեանի մահուան առիթով, LOԽի «Ա. Փափագեան» մասնաձիւղին կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները. Տըր եւ տիկին Արահամ Բագլայեան 20,000 լ. ո. եւ տիկին Ալիս Արապեան 20,000 լ. ո.

A VENDRE
• DUPLEX A RABIEH (RUE 9), 270 M2, VUE PANORAMIQUE, 5 CHAMBRES A COUCHER + SALON + SALLE A MANGER. PRIX: 150.000 \$. TEL: 01/269924 - 01/261741 (9:00 AM - 4:00 PM).

ՏԱՐԵԿԱՆ ԱՍՈՒՆԱՅԻՆ ԲԵՐԱՄԷՍ
Կազմակերպութեամբ՝
Ը. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ
ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԸՆԴՂԱՆՈՒՐ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԻ
ԹՈՒԿԱՆ՝ ՅՈՒԼԻՍ 5, 6, 7, 2002:
ՎԱՅՐ՝ Պուրճ Համուտի Աղասարգիսեան փարքին, Մասթըր Մոնի կից:
ԺԱՄ՝ ԱՌԱՒՕՏԵԱՆ 10:00ԷՆ ՄԻՆՉԵԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ 11:00:
Մասնակցութեամբ՝
Coca-Cola

Khazzaz-Orient Plus
Travel & Tourism
Varna
Starting from 350\$
Including R/T ticket, 8 days bungalow, transfers, guides. Visa & taxes not included
Cyprus 3 days 185 \$
Boat trip to Cyprus & Greece 380 \$
01.900598, 901598 - 03.258336, 256254
www.orientplus.com

TANIA TRAVEL
Sofoco Square - Rue de Damas
Tel: (03) 416555/6/7/8 - Fax: (03) 416561
Rue Sidiel - Face Cinema Jeanne d'Arc
Tel: (03) 739679/82/3/4 - Fax: (03) 340473
Website: www.taniatravel.com
Տըր եւ տիկին Ժորժ Փըրրաքեան

CHARTERS
PALMA DE MALLORCA
8 jours \$ 720
ESPAGNE, PORTUGAL & MAROC
7 prog. 8a' 15 jours \$ 955
Départs tous les Mardis
RHODES
8 jours \$ 355
MYKONOS
8 jours \$ 500
Départs tous les Lundis
Jel-el-Dib 710305/6/7
933781ckfaya 932040 - Saida 730870/739870
Jbel 942744 - 943368
Zahli 806947 - 802592
Tripoli 627755/602469 - Amisou 980076

ՍԼԱՔ

ԱՐԴԵՕՔ ՄԻՎՅՆ ԴԻՍՄ

Արդեօ՞ք դրամը դարձած է ամեն ինչ: Արդեօ՞ք սոսկական թուանշանները...

Այլապես, ինչպես կարելի է բացատրել վաստակաշատ ուսուցիչներու անփառունակ ձեռնով հանգստեան կոչելու ընդհանրացած երեւոյթը...

Ո՞ր են երախտագիտութեան կոչ ուղղող քարոզները, բազմաժախ ցուցատախտակները...

Ո՞ր են մեծարանքի հանդիսութիւնները, որոնք ուսուցիչին տարիներու վաստակը վեր կ'առնէին եւ սերունդներու դաստիարակութեան խորհուրդը կը պանծացնէին ու բալասանը կը հանդիսանային անոնց տքնաջան աշխատանքին:

Արդեօ՞ք բեմասացութիւն էր գերագոյն նուիրումը, պոհաբերութեան յորդորը, ճգնաժամային օրերուն ուսուցիչը գերլարումի մղող:

Արդեօ՞ք դրամը դարձած է ամեն ինչ...

ՀԱՐՅԱՍԵՐ ՄԵ

ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ...

Շարունակուած Ա. ԷջԸ

նիստանի մէջ ամերիկեան ոսպմական օդանավային ուժերու կողմէն ենթարկուած գիւղիկ հարցին, անոր գծով պայրոյթը հետպիտէ անելի թափ կը ստանայ պարզ աֆղաններու մօտ, ինչ որ կրնայ բարդացնել ամերիկացի պիւտրնէրուն աշխատանքը՝ պինտայնէրու հետապընդման համար:

Աֆղանիստանի կառավարութիւնը կ'ըսէ, որ պակի մը հրաւիրուած հիւրերը օդին մէջ կը կրակէին, երբ անոնք սխալմամբ ամերիկեան ուժերուն ուժերու մէջ ենթարկուած են:

Տեղացիներ կը յայտնեն, թէ յարձակումէն ետք անուուպն 30 հոգի թաղած են, սակայն շատ հաւանաբար ուրիշներ աներակներու տակ թաղուած են, կ'ըսեն անոնք:

Ամերիկեան բանակը ցարդ որեւէ յանցանք չ'ընդունիր: Պակրամի օդակայանին մէջ, գնդապետ Ռոնըր Քինկ յայտնած է, որ ամերիկեան ցամաքային ուժեր օդային պորակութեան կոչ ուղղած են՝ կրակոցներու ենթարկուելէ ետք:

Օդանաւերը, ըստ Քինկի, խնդրոյ առարկայ գիւղիկ շրջակայ քանի մը վայրերէ թշնամի կրակոցներ դիմագրաւած են:

Դէպքին շուրջ քննութիւն բացուած է ամերիկացի եւ աֆղան քննիչներու կողմէ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՆԱԽԱԳԱԸ ԼԱՇՈՒՏ ԵՒ ԽՈՐԸՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱԸՐ ԲՆԱՐԿԵՑԻՆ ԵՐԿԻՐԸ ՅՈՒՋՈՂ ԸԱՐՑԵՐ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երէկ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիին, որուն հետ քննարկեց երկրին մէջ արձանագրուած ընդհանուր պարգացումները, ինչպէս նաեւ՝ միջազգային եւ շրջանային շարք մը հարցեր:

Հանդիպումէն ետք, Պըրրի յայտնեց, որ նախագահ Լահուտի հետ քննարկած է հարաւի կացութիւնը եւ նոյն շրջանին դէմ սարքուող շարք մը դատադրութիւնները, որոնց նպատակները սկսած են երեւան գալ:

Պըրրի նկատել տուաւ, որ նախագահ Լահուտի հետ քննարկած է նաեւ քարահատման վայրերու առնչուած հարցեր եւ որոշուած է առանց արտօնագիրի բանոյ քարահատման վայրերուն աշխատանքը ստեղծելու որոշումը գործադրել՝ կենսոյր-

տի նախարարութեան որդեգրած օրէնքներուն հիման վրայ: Ան նշեց, որ կառավարութիւնը իր յաջող նիւթերուն պիտի քննարկէ այս հարցը եւ հաւանաբար առաւելագոյնը մինչեւ երեք ամիս քարահատման վայրերուն ապօրինի աշխատանքը կասեցուի:

Պըրրի ըսաւ նաեւ, որ նախագահ Լահուտին խնդրած է վերջնականապէս լուծել բջիջային հեռաձայններու ապապետակաւնացման հարցը, որովհետեւ անոր ձգձգումը ժխտական ազդեցութիւն պիտի ձգէ ապապետակաւնացման ընդհանուր աշխատանքին վրայ:

Նախագահ Լահուտի այցելեց նաեւ Ֆրանսական Հաստատութիւններու Սեփականատէրերու Միութեան մէկ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ ֆրանսացի

գործատէրերու սենտիբալի Սուրիա - Լիբանան յանձնախումբի նախագահ Թիէրի Տը Պոսէի եւ ներկայութեամբ Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէի:

Հանդիպումին քննարկուեցան Լիբանան - Ֆրանսա յարաբերութիւնները:

Նախագահ Լահուտ հանդիպումին շեշտեց նշեալ հաստատութիւններուն աշխատանքը արդիական ձեւերով շարունակելու կարեւորութիւնը՝ վստահեցնելով, որ ապապետակաւնացման ծրագիրներու յաջողութիւնը եւ միւսիւմին նուազեցումը կը կապուեն երկրին գերագոյն շահերուն առանցքները:

Նախագահ Լահուտ շեշտեց նաեւ, որ յառաջիկայ Հոկտեմբերին Լիբանանի մէջ Ֆրանսայի խաղաղութիւնը պիտի կայացուի, Արաբական Վեհաժողովէն ետք, ցոյց կու տայ Լիբանանի խաղաղութիւնը շրջանային եւ միջազգային բեմերուն վրայ:

Անդրադառնալով Լիբանանի մէջ երեսփոխանական ընտրութեան համար նոր օրէնքներու մշակման՝ նախագահ Լահուտ դիտել տուաւ, որ Լիբանան կարիքը ունի ինտերական օրէնքի մը, որ կը պարտադրէ ընտրուած երեսփոխանին ծառայել ամբողջ Լիբանանին եւ բոլոր լիբանանցիներուն, ոչ թէ միայն իր ներկայացուցած համայնքին պատկանելութեան կամ իր ներկայացուցած շրջանին:

Նախագահ Լահուտ ընդունեց նաեւ ընդհանուր դատախաչ Ատնան Ատտուը եւ պետութեան ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն Վոր. Էտուար Մանսուրը, որոնց հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութեան եւ ապահովութեան առնչուած հարցեր:

Balkan Holidays TRANSLITEX TOURS ԴԷՊԻ ՎԱՌՆԱ ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐՈՒ 36 ՏԱՐՈՒԱՆ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆ Varna Summer

ASHJIAN TOURS Առաջին անգամ ըլլալով արագընթաց ճաշակարաններու ԿԻՊՐՈՍ 3 ՕՐ. Ա. կարգի պանդոկ նախաճաշ տոմսակ - 118\$

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

3 Յունիսի թիւով տեղական մամուլը գլխաւորաբար անդրադարձած է «Մովեմփիթ» պանդոկի բացման իրադարձութեան եւ շեշտը դրած է Ուալիտ Պըն Թալալ իշխանի արտասանած խօսքին:

«Տիար» օրաթերթը այս մասին գրած է. «Ուալիտ իշխանին ճառին պատճառով, «Մովեմփիթ» պանդոկին բացումը քաղաքական անակնկալ մը ստեղծեց. իշխանին ճառը կառավարական ծրագրի մը բնութիւն ունէր՝ քաղաքական եւ տնտեսական կարեւոր ճշդումներով. իշխանը ըսաւ. - այս երկրին հետ կապուած ներդրումներէն շատ անելի անդին կ'անցնի»:

Այս մասին «Սաֆիր» նշած է. «Պետութեան բոլոր ներկայացուցիչներուն դիմաց Ուալիտ իշխանը քննադատեց Հարիրի եւ ըսաւ. Պետութեան ծանր պարտքերը եւ պիտուէի բացը հակակշռելու համար անհրաժեշտ է կապուել տնտեսական հնգամեայ կամ տասնամեայ ծրագրի մը»:

«Անուար»ի համաձայն, «Մովեմփիթ» պանդոկի պաշտօնական բացումը վերածուեցաւ քաղաքական բեմի, իսկ «Քիֆաի Սրապի» գրած է, թէ «Ուալիտ իշխանը իր թեկնածութեան յայտարարութեան բնութիւնը ճառ մը խօսեցաւ եւ քննադատեց կառավարութեան տնտեսական քաղաքականութիւնը, առանց ուղղակիօրէն իշխանի վարչապետ Հարիրիի անունը: Իշխանը շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք քննադատած են անցեալին իր դէմ եղած ցուցական շինծու ելոյթները»:

«Լիուա» օրաթերթը լայնօրէն անդրադարձած է պանդոկի բացման պաշտօնական հանդիսութեան եւ իր առաջին էջով գրած է. «Մովեմփիթ»ի բացումը դուրս գալով իր պրօսաշարքային բնութիւն մտաւ քաղաքական բնագոյնի մէջ. իշխանը կառավարութիւնը հրաւիրեց հաստատելու իր կատարած գործունէութեան ազդեցութիւնը. ան նշեց, թէ ներդրում կատարողը իրաւունք ունի հանգիստ ըլլալու իր կատարած ներդրումներուն առնչութեամբ»: Այս մասին թերթը նաեւ հրատարակած է կարճ տեղեկութիւններ, որոնց մէջ նշած է, թէ գրեթէ բոլոր ներկաները անակնկալի եկան, երբ իշխանը իր խօսքը արտասանեց եւ հարց տուին, թէ արդեօք կառավարական նոր ծրագրի մը ընթացումը կ'ունենային: Թերթին տուած մանրամասնութիւններուն մէջ նշուած է, թէ մինչ ներկաներն ու ժողովուրդը կարծեցին, թէ իշխանին խօսքը, յանպարտաստից էր, ան նախապէս գրուած խօսքը կը կարդար իր դիմաց դրուած 10 սանթիմետրոնոց 2 պատաստի վրային: Թերթը գրած է, թէ բացումին առիթով եղած հրավառութեան համար տրամադրուած է 250 հազար

Շար.՝ էջ 10

ԱՅՆՃԱՐԻ Դ. Կ. ԺՈՂՈՎՐԴԱՊՏԵՏԱԿԱՆ ԽՈՐԸՐԴԱՐԱՆԻ ԱՆՊԱՏԵՐԸ Դ. Կ. ՏԻԿԱՆՏԻ ՄՈՒԹԵԱՆ ՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՆՊԱՏԻՒՄԵՐԸ Դ. Կ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱՆ ՄՈՒԹԵՐԸ Պատիւն ունին հրաւիրելու ձեզ իրենց ՆՈՐ ԱԿՈՒՄԲԻՆ ԲԱՅՄԱՆ գոր պիտի կատարէ՝ ԱՍԵՆԱՊԱՏԻ ԵՒ ԳԵՐԵՐՁԱՆԻԿ ՆԵՐՍԵՍ Պ. ԺԹ. Կաթողիկոս - պատրիարք կաթողիկէ հայոց 7 Յուլիս 2002ին, պայծառակերպութեան տօնին Ա. պատարագէն ետք: ԵՆՆՕԹ.- Չայնաւոր Ա. պատարագը՝ առաւօտեան ժամը 10:00ին:

ONE SECOND IS ENOUGH... Արդարեւ Կը Պատահէ Երկվարեան Մը Մեջ... BUT WE USE THEM ALL. ...ԻՍԿ ՄԵՆ ԵՆԿԱՆ ԵՆ ԱՄԵՆ ԵՐԿՎԱՐԵԱՆ. ԱՖՏԻԼ AFHIL

ASHJIAN TOURS Առաջին անգամ ըլլալով արագընթաց ճաշակարաններու ԿԻՊՐՈՍ 3 ՕՐ. Ա. կարգի պանդոկ նախաճաշ տոմսակ - 118\$

NARRA TRADING & GENERAL SERVICES CO. S.A.R.L. ՆԱՐԱ ԹԵՅՏԻՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ս.Պ.Ը. (Սեփականատէր՝ Վահէ Մանուկեան) ԿԻԹՆԱՍԵՆ ԵԹՈՎՊԻԱՅԵՆ ՍՐԻ ԼԱՆԵԱՅԵՆ ԵՒ ՖԻԼԻՓԻՆԵՆ ՍՊԱՍՈՒՄԵՐՈՒ ԱՊԱՇՏՈՒՄ

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARD ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ 3աւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՎԱՅԵՐԵՆԸ՝ ԻԱ. ԴԱՐՈՒ ՄԵՐ ՄԵԾԱԳՈՅՆ ՍԱՐՏԱԿՐԱԿԵՐԸ

ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ՝ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՆՍԱՓՈՐԴԻ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

Ռ. Իշխանեան «Նա-լասարդ» ամսագիրի իր յօդուածին «Մէջ կը յիշէ Տէրեանի Հնգերոր շա-լաստան» յօդուածին մտածումները: Այսպէս, կենդանաբանական հայ-րենասէր կ'որակէ բոլոր այն ղեկավարները եւ հայ-յազգի մտաւորականները, որոնք ճառ խօսած են հայոց հողերը եւ անոնց առնչուող հարցերու մասին, բայց հայերէն չէին խօսեր: Եւ Տէրեան նման հայրենիքի մասին կ'ըսէ:

Ին տերնացիոցալիզմի մասին, միայն չարչիք կարող է կամեցող, որ կարող էր խառնուել եւ բոլոր մարդիկ դառնան իրար նման: ... Լեզուները չեն, որ միացնում կամ բաժանում են մարդկանց, այլ՝ սրտերն ու հոգիները:

Սպասե՛ք մի քիչ և իմ կամեցածը: Այդ կամեցածը հայրենիքն է: Արդարեւ, իր լեզուն եւ մշակույթը կորսնցուցած բնակչու-թեամբ Հայաստանը հարգած կ'ըլլայ Հայոց հայրենիքը: Իսկ Տէրեանի, ինչպէս նաեւ հին եւ ժամանակակից հարգատ մտաւորական-նութեան համար մշակույթը ազգային կ'ըլլայ, որ ան ոչ կապուած է եւ ոչ վարձու սենյակի: Թերեւս ներկայ իր միջին դասակարգի կորստը չէ, բայց յունարէն չխօսող եւ յունական մշակույթ չզարգացնող իշխուող ղեկավարները եւ Զմիւռեանի ըլլալէ, այսինքն՝ դիակ յոյնի համար, իր պատմութեան հարցը եւ նստուած Տէրեանն աղէտ համարած է այն, որ հայութեան տարբեր շրջանակներուն մէջ ղեկավարութեան եւ մտաւորականութեան մէջ մարտ հայերէն չէր գրեր եւ չէր խօսեր: Այսօր ալ կրնանք ըսել, թէ ուրկէ՞ եւ ի՞նչպէս կը ստանան ղեկավար սնունդը: Մասնաւոր որ ընկերային կեանքի մէջ դասակարգ փոխելու պէս բան մըն է հայերէն չխօսելը, խօսել եւ գրել օտար լեզուով: Տէրեան ըսած է:

... Մի քիչ դիակ է իմ կամեցածը: Այդ կամեցածը հայրենիքն է: Արդարեւ, իր լեզուն եւ մշակույթը կորսնցուցած բնակչու-թեամբ Հայաստանը հարգած կ'ըլլայ Հայոց հայրենիքը: Իսկ Տէրեանի, ինչպէս նաեւ հին եւ ժամանակակից հարգատ մտաւորական-նութեան համար մշակույթը ազգային կ'ըլլայ, որ ան ոչ կապուած է եւ ոչ վարձու սենյակի: Թերեւս ներկայ իր միջին դասակարգի կորստը չէ, բայց յունարէն չխօսող եւ յունական մշակույթ չզարգացնող իշխուող ղեկավարները եւ Զմիւռեանի ըլլալէ, այսինքն՝ դիակ յոյնի համար, իր պատմութեան հարցը եւ նստուած Տէրեանն աղէտ համարած է այն, որ հայութեան տարբեր շրջանակներուն մէջ ղեկավարութեան եւ մտաւորականութեան մէջ մարտ հայերէն չէր գրեր եւ չէր խօսեր: Այսօր ալ կրնանք ըսել, թէ ուրկէ՞ եւ ի՞նչպէս կը ստանան ղեկավար սնունդը: Մասնաւոր որ ընկերային կեանքի մէջ դասակարգ փոխելու պէս բան մըն է հայերէն չխօսելը, խօսել եւ գրել օտար լեզուով: Տէրեան ըսած է:

Օտար լեզու սորվելով եւ գործածելով, ինչ որ ըլլան պայմանները, մոռնալով հայերէնը, զայն անտեսելով կամ արհամարհելով, ոչ թէ յառաջ-դիմութեան ընթացք կ'որոշէր, այլ՝ փերեզակի, չարչի, կը հեռուանէր անհատական յաղոցութիւնը՝ զիջելով ազգը: Փերեզակ եւ ապագայանցած չեն ըմբռնել լեզուի հասարակական-ոգեական ուժը, քանի որ իրենց մոտեցումները կը յամենան անհատական մակարդակի վրայ: Յիշե՛ք իրան-տաղի յեղափոխականները, որոնք կ'ըսէին, թէ անգլիացիները պիտի վտարուին ոչ թէ հայրենիքով, որ իր լայնտայի ազգային լեզուն է: Իսկ լեզուի այդ ուժեղացումը թիւրեմ ծանր, մահացու հարուած կը ստանայ ամէն անգամ, որ նախա-յարձակման կ'ենթար-կուի հարստացման, արդիականացման, դերաբան-ման կարգախօսներով: Հայերէնի պաշտպանութիւնը, զարգացումը, գոյումը, առօրեայ գործածութիւնը ազգային գոյապայքարին համար էական են, այդ իսկ պատճառով ան ունի քաղաքական անշրջանցելի նշանակութիւն: Մինչև թիջօլէօյեան, ուսուցիչ, հայերէնի պաշտամունքը ունեցող հրապարակա-գիր, իր մահուանէ քիչ առաջ «Լեզուական հանգիստ» ակնարկում ըսելով: Եւ այդ մարդիկ այսօր ամենից բարձր են նշում Հայաստանի մասին՝ մի-եւնոյն ժամանակ ինքնակալ կերպով ստանձ-նելով ազգի ներկայացուցչութեան իրաւունքը:

Ս. Թէօօլեանի ահա-զանգը ամբաստանագիր է: Ինչպէս ինք կ'ըսէ, ընկրկում կայ, այսինքն չէ՛ր մարդը թեթեւ սրտով, յանուն գործնա-պաշտութիւններու տեղի տուած է եւ տեղի կու տայ: Կը գրէ: Ինքնախաբուրիւնը չունիմ հաւատալով, որ կսկիծն ու ողբ դարման են ցաւին, եղբերակայն այն ընկրկումին, որուն մատնուած է լեզուն ընդ-հանրապէս եւ արեւմտա-հայերէնը մասնաւորա-բար: Հայաստանի 1920-1990 եօթնամեամեայ ժամանակաշրջանին ռուսերէնը եւ ուղղագրայինը բարբառութիւն-թիւնը պղծեցին արեւելահայ լեզուն, եւ Աստուած միայն գիտէ, թե ի՞նչ է ինչ չափով կարելի պիտի ըլլայ դարմանել աղէտը... Ազգային հարգատ մտաւորականութիւնը եւ քաղաքական ղեկավարութիւնը, թօթափելէ ետք խորհրդային ապագային վարչակարգը, պատմական պատասխանատուութիւն ունին հայերէնի գոյման եւ անոր ուղղագրութեան վերականգնման հանդէպ: ՅԱԿՈՒ ՊԱՆԵԱՆ (Շար. 2)

ԱՅՆՃԱՐԻ ՄԵՋ

ՄԱՐԻԱ ԵՒ ՄԱՐՏԻԿ ՓԱԼԱԶԵԱՆՆԵՐՈՒՆ ԵՐԱԽԱՅՐԻՔԸ

Փոքր տարիքէն իսկ երաժշտութիւնը իր բնական-ազդեցիկը ու անբաժանելի մաս ընտրելու նախաձեռնութեան մէջ մեծ է նաեւ դերակատարութիւնը ծնողական գիտակցութեան, քաջալերանքին ու հետեւողականութեան: Նման հաստատումի մը արդիւնաւորման ակնհայտն էր Այնճարի երաժշտասէր հանրութիւնը կիրակի, 23 Յունիսի երեկոյեան ժամը 7:00ին, «Հետուիկ» սրահին մէջ, ուր դաշնակի եւ ջութակի իրենց անդրախիտ մենահամերգը տուին պատանի ջութակահար Մարիա եւ Մարտիկ Փալազեանները: Համերգին ներկայ եղան իրենց ուսուցիչները, բարեկամներն ու մեծաթիւ երաժշտասէրները:

Լուրջ հեռանկարներ ուրուագծող երկմաս այս համերգին բացումը կատարելով՝ Յոյն Շիլլերտըմեան ուրախութիւն յայտնեց Այնճարի մէջ ծխախոտի դոյզ պատանիներու այս յաղոցութեան աւիթով եւ յայտնեց, որ անոնց ծնողները անցնող եօթը տարիներուն շարունակ ամէն շաբաթ ապահոված են զաւակներուն դասի համար դէպի Պէյրութ երթուղարձը, ուր անոնք կը շարունակեն ստանալ իրենց երաժշտական կրթութիւնը: Արդարեւ, Մարիա Փալազեան այս տարուան շրջանաւարտն է Թէթէլեան երաժշտա-նոցին, ուր աշակերտած է Ալին Պուտաքեանի, իսկ Մարտիկ Փալազեան եօթը տարիներէ ի վեր կ'աշակերտէ Երուսեմ Երկանեանին:

Յայտագիրին առաջին մասով Մարիա Փալազեան յաղորդաբար նուագեց Պախի Ֆրանսական ճրգ շարժումը, Մոցարթի «Լա մատր սոնատն» ու «Թեմա եւ տարբերակներ», Շոստաքովիչի «Փոլքաս» եւ Լիստի հունգարական Ռապսոտին: Իսկ Մարտիկ Փալազեան ջութակահարութեամբ կատարեց Հենտրի ճրգ սո-նատին երկրորդ շարժումը, Պախի լա միսոր քոնչեր-թոյի առաջին շարժումը, Տանքլայի «Էթիւտ» (մե-նանուագ), Կոմիտասի «Կաքաւիկ» ու Փականիսի-Քրայսլըրի «Փրեիլտ» եւ Ալեկսո» ստեղծագործու-թիւնները, որոնք ընդունուեցան ջերմութեամբ:

Բնածին ընդունակութիւններու եւ հմուտ ուսու-ցիչներու բարեխիղճ աշխատանքին արգասիքը եղող, ինքնավստահ շունչով ու երաժշտական լայն կարե-լիւնութիւններու բացաշարունակ յատկանշուող Մարիայի ու Մարտիկի երախարիքը ոչ միայն երաժշտա-կան ուրախութիւն մը եղաւ Այնճարի համար, այլեւ գեղեցիկ եւ յիշարժան մեկնարկ մը՝ դէպի արուեստի խորախորհուրդ աշխարհ, ուր նոր նուաճումներ կ'երեւին, եւ որուն համար շնորհաւորելի են զոյգ պատանի երաժիշտներուն ծնողներն ու յատկապէս ուսուցիչները, որոնք ճիշդ չեն խնայած անոնց երաժշ-տական կազմաւորումին համար: Բարի՛ երթ: Զ. Բ.

ԵՐՈՂԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Հայրենի «Բերդ» պարային համոյթը (գեղարուեստական ղեկավար՝ Պորիս Գեորգեան) երկու ամ-սուան համար մեկնեցաւ Ֆրանսա եւ Սպանիա: Համոյթին պարարուեստի միտելեան նախագահ եւ համոյթի ղեկավար պարուստի Վարէն Գեորգեան յայտնեց, որ «Բերդ» ֆրանսական կողմին հրաւէ-րով պիտի մասնակցի Ֆրանսայի մէջ կազմակեր-պուող տարեկան «Ժողովրդական եւ ազգագրական պարերու փառատոն»ին: Փառատոնէն զատ, համոյթը հանդէս պիտի գայ Ֆրանսայի (40 օր) եւ Սպանիոյ (20 օր) 30 քաղաքներ-ու մէջ (Փարիզ, Թուրն, Լիոն, Վալանս, Թոլոսո, Մատրիլ եւ այլն): Մարտիին մէջ ընդգրկուած են վասպուրականի, Շատախի, Վանի, Տարսնի, Ալաշ-կերտի եւ հայկական ազգագրական այլ պարեր:

ԼՈՒՐԵՐ ԶԱՒԱՍՔԷՆ

ԹՈՒՄԱՆԵԱՆԱԿԱՆ ՈՒՆՏԱԿԱՆՅՈՒԹԻՒՆ 29 եւ 30 Յունիսին Զաւարթի մէջ տեղի ունեցան թումանեանական ուխտագնացութեան օրեր: 29 Յու-նիսին ուխտագնացներ այցելեցին Թմկաբերդ, որուն մասին խոր փիլիսոփայական բանաստեղծութիւն գրած է Յովհաննէս Թումանեան: Յաղորդ օրը ուխտագնացութեան մասնակիցները այցելեցին Վահան Տէրեանի ծննդավայրը՝ Գանձա: Ուխտագնացութիւնը աւարտեցաւ Փարվանա լիճի ափին:

ՊՕՂՈՍ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ

28 Յունիսին Ախալքալաքի շրջանային մշակույթի տան մէջ սկսաւ բազմամարտի շրջ ախոյեանութիւնը, որ նուիրուած է Պօղոս Պօղոսեանի յիշատակին: Նախքան մրցումներուն սկսիլը, քաղաքի Ս. Ուսէ եկե-ղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարո-ղութիւն՝ Պօղոս Պօղոսեանի հոգիին համար: Մրցումներու 6 կարգերուն համար մասնակցած են շաւարթի մօտ 100 մարդիկներ:

ԱՆԱԼՔԱՆՔԻ ԵՒ ՆԻՆՈՑՄԻՆՏԱՅԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ախալքալաքի եւ Նինոսմիտայի շրջանային ընտ-րական յանձնախումբերը հրապարակած են տեղա-կան նորընտիր վարչութիւններուն նախագահներուն անունները. անոնք արդէն իսկ ձեռնադրուելու են իրենց աշխատակազմերու ձեւաւորման:

Ըստ «Ա - ԻՆՏՅՕ» լրատու գործակալութեան, Ախալքալաքի շրջանային վարչութեան մէջ 22 անդամ-ներէն 17 հայ են, 5ը՝ վրացի (շրջանային վարչութեան նախագահ՝ Արտուշ Համբարձումեան): Նինոսմիտ-այի շրջանային վարչութեան 10 անդամներէն 9ը հայ են, մէկ հոգին՝ լեհ (շրջանային վարչութեան նախա-գահ՝ Ռաֆիկ Արզումանեան):

ՕՐԻՆԱԿԵԼԻՆ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԷՆ ԼԻԲԱՆԱՆ ԵՐԿԱՐԱԾ ԶԵՌՔԸ

Ուրախութամբ հոգեկան հրճուանքով իմա-ցանք Լոս Անճելիսի հայ գաղութին մաս կազ-մող մուսալիմներու եւ, մասնաւորաբար, Գալիսիայի այնքան բարեկամ Գալիսիացիներու, խրախոսող մը ընթացքի անցնող հանգանա-կած 45 հազար տղայքը, ի նպաստ Այնճարի «Յառաջ Գ. Կիլիպէնկեան» ազգային վարժա-րանի (նախալրաբար եւ երկրորդական վար-ժարան): Նոյն առիթով եւ նոյն նպատակին համար կատարուած է իշխանական նուիրա-տուութիւն մը՝ 100 հազար տղայք, նարեկ Ա. քննչ. Շիրիքեանի ընտանիքի կողմէ, իրբեւ հիմնադրամ:

Մեկնաբանութեան չի կարոտիր այս նուիրա-տուութիւնը, որ իրագործուած է իրենց ար-մատներուն կապուած հայրերիցներու կողմէ, որոնք գիտակցելով Սփիւռքի այս հայահոծ օճախի գոյատեւման կարեւորութեան՝ ձեռ-նարկած են համախմբելով, ձեռք ձեռքի տա-լով գումարներ հանգանակելու, որպէսզի հայ դպրոցը շարունակէ իր առաքելութիւնը, եւ հայ նորագոյն սերունդը հայ մնայ լեզուով եւ աւանդութիւններով:

Վերջին տարիներուն, երբ լիբանանահայ վարժարանները պիտեմեական տագնապներ կը դիմագրանէ, երբ հայ ուսուցիչները ենթակայ են հոգեկան փլուզումի, նման օգտակար նա-խաձեռնութիւններ յոյսի դուրսը կը բանա լի-բանահայ կրթական կեանքին բարելաւման դիմաց:

Նախաձեռնութիւնը ինքնին օրինակելի է, ու կ'ակնկալենք, որ այսպիսի այլ նախաձեռ-նութիւններ ըլլալ Լիբանանէն հետագայ, լաւ կայմաններ մէջ իրենց կեանքը հունաւորած հայ դպրոցներու կողմէ եւ մտածքն իրենց եր-բեմնի ձեռնարկային մասին, ուր այս օրերուն տնտեսական տագնապը, անգործութեան ալի-քը, ինչպէս նաեւ այլ պատճառներ (քաղաքա-կան, թէ՛ ընկերային), կը հարուածեն մեր կրթական կեանքը:

Մեր վարժարանները լիբանանահայութեան ողնասիւնն են առանց այս մեծ կառոյցին, որ հայ դպրոցն է, պիտի կարսնցեմք մեր առա-քելութեան հմայքը: Հայ դպրոցը նկատուած ենք հիմնաքար մեր ազգային կառոյցին: Լիբա-նանի մէջ 1922էն ի վեր հիմնուած է մինչեւ 1980 եւ աւելի ինքզինքը պահած հայ դպրոցը մեր ինքնութեան փայլուն վկայարանը եղած է: Վերջին տարիներուն տոնակատարուած 50, 60 եւ մինչեւ 80ամեակները նշող, պաշտօնա-կան հանդիսութիւններով փառաբանուող մեր կրթական օճախները հայեցի դաստիարակու-թեամբ սերունդները պարտաւոր են: Երբ Լի-բանանի պատերազմը մեր կամքէն անկախ մեր գաղութը տարուցնեց, մեզմէ հետեւողները միշտ յիշեցին իրենց ծննդավայրը, իրենց վարժարանները: Այսօր, որեւէ ժամանակա-ւելի, կարիքը ունիցող լիբանանահայ գաղու-թի կրթական հաստատութիւններու գոյատեւ-ման սատարող փրկարար ձեռքերու: Կարեւո-րը սրտակցութիւնն է, անտարբեր չմնալ՝ մեր տագնապին ի տես:

Լոս Անճելիսի մուսալիմներուն նախա-ձեռնութեան օրինակ վարակիչ պէտք է դառ-նայ լիբանանահայ վարժարաններէն շրջանա-ւարտ եղած ու այժմ այլ արեւներու ներքեւ շնչող մեր հայրենակիցներուն համար: Իրենց նախնի վարժարանները յիշող հոգիներու կա-րիքը ունին մեր վարժարանները: Ոչ քիչ քաղցր է մեր ստեղծութիւններու դիմագրանած մղձականքը: Ու երբ Լիբանանէն կը պահան-ջուի արտասահմանի մեր գաղութներուն ու-սուցիչ, խմբագիր, քահանայ, եկեղեցական, դպրատան եւ ազգային մարզի մէջ աշխատող գործիչներ, ուրեմն նեցուկ կանգնող յիշեալ «անձնակազմերը» հայթայթող կրթական օճախներուն, նոյնիսկ մեր լուսններով: Ըսինք՝ լուսններ: Անոնք կ'օրհնուին, կաթիլ-ները կը ծովանան, կարեւորը ՏԱԼՈՒՒ տրա-մադրութիւնն է:

Այս ըսելով՝ մեր յոյսը միայն արտասահ-մանի չենք կապած. Լիբանան եւ ունի իր բա-րեբարները, որոնք տարիներ շարունակ օճա-ղակած են մեր ազգային կեանքին գոյատեւ-ման, ամէն մարդի մէջ: Լոս Անճելիսէն եկած այս նորագոյն նպաստը պէտք է արթնցնէ իւ-րաքանչիւր լիբանանահայ ուստարբերու-թիւնը, որպէսզի մեր նուագած համրանքը մեզ մղէ դէպի ինքնավստահութիւն եւ ինքնագորա-ցում, որպէսզի շարունակենք երբ արագ քարոյթի: Լոս Անճելիսէն Այնճար առաքուած օգնութիւնը շերտ սրտակցութեան կազմուրիչ դասն է: Հետեւելիք այս դասին:

ՀԱՎԱՆԳՈՒՄՏ

ՅԱԿՈՒ ՊԱՆԵԱՆ

ԸՍՏ ՈՒՄՍԻՈՅ ՆԵՐԵՆԻ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԳԱՂԹԸ ԱԶԳԱՄԻՋԵԱՆ ԲԱՆՈՒՄՆԵՐ ԿԸ ՀՐԱՎՐԷ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՉ ԾՐՁԱՆ ՆԵՐՈՒՆ ՄԷՉ

28 Յունիսին Ռուսիոյ ներքին գործոց նախարար-ութեան գաղթի դաշնակցային ծառայութեան պետ Անտրէյ Զեռնինը, Ռուսիոյ մէջ գաղթի խնդիրներուն նուիրուած խորհրդակցութեան մը ընթացքին ելոյթ ունենալով ըսաւ, որ անօրինական գաղթը Ռուսիոյ սահմանամերձ շրջաններուն մէջ կը սրէ ազ-գամիջեան յարաբերութիւնները, կարգ մը պարագա-ներու իրական սպառնալիքի վերածուելով Ռուսիոյ ազգային անվտանգութեան համար:

Նորհրդակցութեան մասնակցած են Ռուսիոյ անվը-տանգութեան ծառայութեան, պետական մաքսային կոմիտէի, դաշնակցային սահմանապահ ծառայու-թեան, կառավարութեան կարգ մը բաժանմունքներ-ը եւ այլ կառույցներու ներկայացուցիչներ: Չեռնինը իր խօսքին մէջ ըսաւ, որ ներկայիս երկ-րի տարածքին կը գտնուին 1,5 միլիոնէ աւելի օտար քաղաքացիներ եւ անօրինականօրէն ապրող անձեր, որոնք քաղաքացիութիւն չունին:

Ըստ Ա. Չեռնինըի, անօրինականօրէն ներգաղ-թողնուող մեծամասնութիւնը Ռուսիա կը հասնին զբօսաշրջութեան կամ կրթութեան պատճառաբանու-թեամբ, ինչպէս նաեւ իրբեւ ժամանակաւոր աշխա-տուծ:

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶՄԱՅՆԻ ԹԻՒՆԵՐԸ «ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն: -258526, 260115 եւ 241274:

ՀԱՄԲԻ ԱՍՈՒՆԱՅԻՆ ՀԱՍԷՆ HAMPPI SASSOUNIAN CSP - L.A.C. B - 5 - 131 44750 60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 — USA

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂՈՒՄ

Լիբանանյան կեանքի երևույթներ

ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՄԵԾ ԹԻՒՈՎ «ՉՈՋԵՐ ՀՆՁԵԼ» ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՉ

Ինքնաշարժի առօրեայ արկածները տակաւին կը շարունակեն Լիբանանի մէջ մեծածախ «զոհեր հնձել» եւ զանոնք ինքնաշարժներու անիւներուն տակ նետել: Արկածներուն զխաւոր պատճառը ճամբաներուն եւ յատկապէս մայրուղիներուն վրայ ինքնաշարժներու չափազանց արագութիւնն է, որուն վրայ կու գան աւելնալու վարորդներուն անօրէնութիւնները, ճշգրտած նշաններուն եւ ուղղութիւններուն չհետեւիլը:

Իրողութիւնը այն է, թէ մահուան անիւր աւելի շատ կը թաւալի մայրուղիներուն եւ ծովեզերեայ ճամբաներուն վրայ, ուր ինքնաշարժի մրցումի ելած վարորդներ ժամանցի պահեր կ'ապրին վտանգելով հազարաւոր քաղաքացիներուն ապահովութիւնն ու կեանքը: Այդ վտանգը կը կրկնապատկեն մայրուղիները Հանգարտ քաղաքով կտրել փորձող անձերը, որոնք առանց երկար մտածելու, չորս կողմ նայելու կամ քաղաքի յատուկ կամուրջի ճամբան առնելու կը յայտնուին ինքնաշարժներուն առջեւ, վտանգի ենթարկելով թէ՛ իրենց եւ թէ՛ վարորդներուն ու այդ վայրկեանին մայրուղիին վրայ գտնուողներուն կեանքը:

Լիբանանի մէջ ամէնօրեայ այս վտանգը շեշտուած է հակառակ այն ուղղութիւններուն, ցուցմունքներուն եւ օրէնքներուն, որոնք ի գործ դրուած են կառավարութեան համապատասխան մարմիններուն կողմէ: Ըստ երեւոյթին, այդ օրէնքները, ինչպէս ապահովութեան գոտիի գործածութիւն, քառասուն վիճակներու չեղարկումը չեղարկուած դրուութիւն, խտտօրէն կը կիրարկուին օրէնքի յայտարարութեան յաջորդքի մը շարքի մէջ: Այսինքն, որմէ ետք՝ եթէ ոչ բոլորովին, գէթ 95 առ հարիւրով մոտացութեան մատուցուելու համար:

Ներքին ապահովութեան ուժերու երթեւեկի բաժնի ուժերուն պատրաստած մէկ վիճակագրութիւնը ցոյց տուած է, որ վերջին երեք տարիներուն ինքնաշարժի արկածներու թիւը զգալիօրէն նուազած է, սակայն այլ ուսումնասիրութիւններու համաձայն, 2000 թուականին արձանագրուած 2336 արկածի փոխարէն՝ 2001ին թիւը բարձրացած է 2499ի, այսինքն՝

2001-ին Լիբանանի մէջ ինքնաշարժի արկածներուն ընդհանուր պատկերը			
ԱՄԻՍ	ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԹԻՒ	ՁՈՂԵՐՈՒ ԹԻՒ	ՎԻՐԱՒՈՐՆԵՐՈՒ ԹԻՒ
Յուճուար	209	23	324
Փետրուար	180	19	269
Մարտ	194	17	295
Ապրիլ	173	29	251
Մայիս	214	22	374
Յունիս	194	20	295
Յուլիս	235	33	378
Օգոստոս	225	32	376
Սեպտեմբեր	209	33	305
Յոկտեմբեր	223	41	337
Նոյեմբեր	201	28	288
Դեկտեմբեր	242	26	373
ԸՈՂ. ԹԻՒ	2499	323	6865

6,53 առ հարիւրով աճած է: Խորքին մէջ, գլխաւոր երկու տուեալներ, որոնք անմիջականօրէն պատասխանատու են ապահովութեան. առաջինը՝ ինքնաշարժներու վարորդներն են, իսկ երկրորդը՝ պետական համապատասխան մարմինները:

Երբ անդրադառնանք ինքնաշարժներու վարորդներուն գործած սխալներուն եւ անօրէնութիւններուն, պէտք է նաեւ նշենք, որ իբրանանեան բոլոր մայրուղիներուն եւ փողոցներուն մէջ կան անապահով եւ չմշակուած երեւոյթներ, որոնք կը վտանգեն ինքնաշարժի երթեւեկող քաղաքացիին կեանքը:

Սկսելու համար, պէտք է անպայման ըսել, որ լիբանանցի ինքնաշարժ քաղաքի արտօնագիր կրնայ ստանալ առանց օրինաւոր քննութեան ներկայանալու: Այս երեւոյթը ինքնին սխալ ճամբու մէջ առնուած առաջին քայլն է: Ասոր կողքին, սուրացող ինքնաշարժներու եւ քիմիայի հետաձայն օգտագործող կամ ապահովութեան գոտի չգործածող վարորդներու համար յատուկ պատիժներ եւ տուրքեր սահման-



ւած են, սակայն պէտք եղած խտուրթեամբ չեն գործադրուիր, այլ՝ ձգուած են պատահականութեան, Լիբանանի գրեթէ բոլոր, յատկապէս ներքին ու լեռնային փողոցները, պէտք եղած ձեւով եւ երբեմն բնալուսաւորուած չեն եւ օտուած չեն երթեւեկի անհրաժեշտ նշաններով եւ ցուցանիշներով: Ծամբաներուն վրայ չկան յատուկ սարքեր, որպէսզի որոշեն ինքնաշարժներուն ընթացքը: Ծամբաները անհրաժեշտ ձեւով չեն սարքաւորուած ու ասֆալտապատուած եւ «օտուած են» խորունկ եւ... անակնկալ փոսերով:

Ժխտական այս բոլոր տուեալները աւելի եւս վտանգաւոր կ'ըլլան, երբ նկատի ունենանք, որ լիբանանեան մայրուղիներուն վրայ ինքնաշարժներով մրցումներ կը կազմակերպուին եւ վարորդը յանկարծ ինքզինքը կը գտնէ սուրացող երկու ինքնաշարժներու միջեւ եւ կը շուարի, թէ ի՞նչ պէտք է ընէ: Կան նաեւ անփութօրէն քրոջները, որոնք առանց նշան տալու ուղղութիւն կը փոխեն, առանց յայտ կը քշեն, անպատշաճօրէն կը կանգնին կամ արջն ձախ կը տեղափոխուին, կ'ուզեն նեղ ճամբաներու վրայ շրջանցել ինքնաշարժներ, դէպի վեր ելլող ճամբէն վար կ'իջնեն եւ այլն, եւ այլն:

Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ անհեթեթ պատճառներով, ամիսը 40 զոհ կ'արձանագրուի Լիբանանի մէջ: Ըստ փոխադրութեան ապահովութեան բաժնի պատասխանատուին, զանազան ծրագրերը եւ քայլերը որդեգրուած են, որպէսզի այս կարգիւնը փոխուի:

1999ի վերջերուն, Լիբանանի մէջ սկսաւ ռատարներու գործածութիւնը: Անոնք փողոցին պատկերը արձանագրող սարքեր են եւ ցոյց կու տան իւրաքանչիւր ինքնաշարժի արագութիւնը: Ռատարները կը գետեղուին փողոցներուն կամ մայրուղիներուն վրայ եւ անոնց կ'ընկերակցին ապահովութեան ուժեր, որոնք կը հետեւին արտօնուած արագութեան սահմանը անցնող ինքնաշարժներուն եւ անոնց տուրքեր եւ նոյնիսկ պատիժներ կը սահմանեն: Ըստ որոշուած օրէնքին, երեք մակարդակի տուրքեր կան. առաջինի պարագայն այն է, որ կը պատճառէ մարդկային վնասներ եւ անոր համար ճշգրտած է 125 հազարէն 250 հազար Լ.՝: Երկրորդը կ'ընդգրկէ այն արկածները, որոնք կը վտանգեն կենսություն ու ընդհանուր ապահովութիւնը. ասոր համար ճշգրտած է 75էն 200 հազար Լ.՝, իսկ երրորդը՝ ճշուած օրէնքներու հակառակ գործելն է եւ որուն համար կը վճարուի 25էն 100 հազար Լ. ոսկի:

Սակայն, դժբախտաբար, այսօր այս ռատարները չեն գործեր եւ գրեթէ ոչ մէկ հսկողութիւն կայ ինքնաշարժի վարորդներուն: Անոնք առանց որեւէ հաշիւի կամ պատասխանատուութեան կը սուրան փողոցներուն մէջ: Տարիներու ընթացքին մեծ է թիւը այն անձերուն, որոնք մահացած են մայրուղիին մէկ կողմէն միւրը անցած ատեն: Իրողութիւնը այն է, թէ կարգ մը շրջաններու մէջ բնաւ քաղաքի յատուկ կամուրջներ չկան եւ այդ պատճառով մարդիկ կը ստիպուին ճամբէն անցնել, սակայն կան այլ պարագաներ, որոնք կամուրջին քով կը սպասեն, երբեմն երկար ատեն, որպէսզի մայրուղիին վրայի սուրացող ինքնաշարժներուն մէջէն կարենան միւս կողմ անցնել: Յստակ է, թէ Լիբանանի մէջ թէ՛ ժողովուրդը եւ թէ՛ պատասխանատուները չունին անհրաժեշտ գիտակցութիւնն ու պատասխանատուութիւնը նախ իրենց եւ ապա՝ այլ քաղաքացիներուն ապահովութիւնը չվտանգելու համար:

Երկար ու մանրամասն կը խօսուի ապագայի ծրագրերի մասին, բարգաւաճ եւ զարգացած պատկերներու, քաղաքակրթութեան եւ բոլոր օրէնքներն ու որոշումները մշակուի ու զանոնք գործադրող Լիբանանի մասին, սակայն դժբախտաբար գործն ու իրականութիւնը չափազանց հեռու են թուղթի վրայ գրուող եւ հոն մնացող ծրագրերէն: Այսօր շատ պարզ ու յստակ է, թէ լիբանանցիին կեանքը կը վտանգուի այն վայրկեանին, երբ ան տունէն դուրս կու գայ եւ զանազան անակնկալներով լեցուն փողոցին կը մօտենայ: Ըստ երեւոյթին ծրագրերը շատ են ու այլազան, սակայն զանոնք գործադրողներն ու յարգողները՝ չափազանց քիչ...

ՃՇՂՈՒՄԸ ԱՐԱԳՈՒԹԻՒՆԸ

- 100 քիլոմէթր / ժամական մայրուղիներուն վրայ:
- 80 քիլոմէթր / ժամական լեռնային գլխաւոր ճամբաներուն վրայ:
- 60 քիլոմէթր / ժամական բնակեցուած շրջաններու մէջ:

ՀՏԱՊ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՅԻՆ

Արկածներու կամ անկանխելի պատահարներու պարագային, շտապ օգնութեան համար չմոռնալ հետաձայնի հետեւեալ թիւերը. - Ներքին ապահովութեան ուժեր - 112 - Քաղաքային պաշտպանութիւն - 125 - Կարմիր խաչ - 140 - Հրշէջներու բաժանմունք - 175:

ՔԱՐԵՏ ՆՈՐԱ ԲԱՐՍԵԱՆ

Երկար ու մանրամասն կը խօսուի ապագայի ծրագրերի մասին, բարգաւաճ եւ զարգացած պատկերներու, քաղաքակրթութեան եւ բոլոր օրէնքներն ու որոշումները մշակուի ու զանոնք գործադրող Լիբանանի մասին, սակայն դժբախտաբար գործն ու իրականութիւնը չափազանց հեռու են թուղթի վրայ գրուող եւ հոն մնացող ծրագրերէն: Այսօր շատ պարզ ու յստակ է, թէ լիբանանցիին կեանքը կը վտանգուի այն վայրկեանին, երբ ան տունէն դուրս կու գայ եւ զանազան անակնկալներով լեցուն փողոցին կը մօտենայ: Ըստ երեւոյթին ծրագրերը շատ են ու այլազան, սակայն զանոնք գործադրողներն ու յարգողները՝ չափազանց քիչ...

ՄՆՆԴԱԿԻՏԱԿԱՆ

Առողջ Մնայու Գաղտնիքները

ԱՄԱՌՆԱՅԻՆ ՄՆՆԴԱԿԱՆՈՆՆԵՐ

ՃԱՇԻ
ՉՈՒԳԱԳՐՈՒԹԻՒՆ (ՃՈՒՏ ՔՐՄՊԱՅՆԻԿ)

Մննդականոնի այս ձեւը պատրաստուած է ծանրութիւն կորսնցնելու համար, սակայն անոնք, որոնք այս ձեւին կանոնաւորապէս կը հետեւին, ծանրութիւն կը կորսնցնեն, որովհետեւ անոր մէջ գտնուող քաղտնիքները ֆունկցիոնալ չեն:

Տորթ. Ուիլիամ Հէյնընը Դ. Ուիլիամ Հէյնընի հետ մտախոյզ քննարկումները արդէն իսկ արդարացի են: Այս ձեւը անցեալ դարուն: Ան կ'ըսէ, թէ հիւսիսային փոփոխութիւններ ի յայտ կու գան, երբ թոյններու եւ թթուային աղտերու կուտակում տեղի կ'ունենայ: Ան կը հետեւեցնէ, որ փորձէին եւ քարպոտայութիւն պարունակող ուտելիքները միասնաբար նոյն ժամին ընթացքին պէտք է ուտել: Ան նաեւ կ'արգիւյն կարգ մը ուտելիքներու սպառումը եւ օրէնքներ կը սահմանէ, թէ ի՞նչպէս եւ ե՞րբ պէտք է ուտել:

ՍՈՍԻՍՏԱԿԱՆՈՆԻՆ
ԳԻՐՈՒՄԻՆԵՐ

Քիչ մը դժուար է սորվել բոլոր օրէնքները, սակայն, երբ վարժութիւն դառնան, անոնք՝ կը դիւրանան:

Առողջապահական ազդակ
Մննդականոնի այս ձեւը իր մէջ կը պարունակէ ճաշերու բոլոր այն խումբերը, որոնք անհրաժեշտ են առողջութեան համար. սակայն կարգ մը մասնագէտներ կ'ըսեն, թէ անոնց մէջ գտնուող քաղտնիքներ կը կարծիք քանակը քիչ է ոմանց համար:

ՏՐՈՒՄԻՆՈՆԵՐ
Պտուղը պէտք է առանձին ուտել:
Կանաչեղէնները առանձին կամ արտօնուած ուտելիքներու հետ ճաշակել:

Մննդականոնի այս ձեւը բնաթելով: Հարուստ ուտելիքներէ բաղկացած է ընդհանրապէս: «Տը Գոմփիլթ Եֆ. Փլէյն Տայթթը» հրատարակուեցաւ առաջինին քանի մը տարի ետք: Այս սննդականոնին լիւսաւոր մեկնակէտը այն է, որ բնաթելով հարուստ ուտելիքները կուտ կը պահեն՝ առանց աւելորդ քաղտնիքներ աւելցնելու:

Մննդականոնի այս ձեւը ամէնէն առողջապահականներէն մէկը կը նկատուի: Կարգ մը ուսումնասիրողներ կ'ըսեն, թէ բնաթելի չափազանց օգտագործումը պատճառ կը դառնայ, որ կարգ մը հանքանիւթներ, երկաթի նման, ինչպէս նաեւ՝ քալսիումը, չեն բոժոժուին մարմնին մէջ: Սակայն հիմնական ուսումնասիրութիւն մը կը յայտնէ, թէ բնաթելով հարուստ ճաշերը կը նուազեցնեն քաղցկեղի վտանգը: Բնաթելով հարուստ սննդականոնին հետ շատ ուրախ պէտք է խմել:

ՍՈՍԻՍՏԱԿԱՆՈՆԻՆ
Այս սննդականոնը իր մէջ քիչ ճարպ կը պարունակէ եւ քարպոտայութիւնով հարուստ է, ինչպէս՝ հատիկի տեսակները, եփած գետնախնձորը, երկաթի նման, ինչպէս նաեւ՝ քալսիումը, չեն բոժոժուին մարմնին մէջ: Սակայն հիմնական ուսումնասիրութիւն մը կը յայտնէ, թէ բնաթելով հարուստ ճաշերը կը նուազեցնեն քաղցկեղի վտանգը: Բնաթելով հարուստ սննդականոնին հետ շատ ուրախ պէտք է խմել:

ՍՈՍԻՍՏԱԿԱՆՈՆԻՆ
Նախաճաշ՝ յատուկ ճաշացուցակ մը լեցուն բնաթելով հարուստ ուտելիքներով, ընդհանրապէս սերի կաթին հետ եւ թարմ պտուղ:
- Կէսօրուան ճաշ՝ ընկուզով եւ հում կաղամբ:

ՍՈՍԻՍՏԱԿԱՆՈՆԻՆ
Նախաճաշ՝ պնակ մը թարմ պտուղի տեսակներ, գաւաթ մը պտուղի հիւթ:
- Կէսօրուան ճաշ՝ աղցանի սենտուրի բնական ձեւով պատրաստուած հացին վրայ, մայրիցիներ հետ:
- Ընթրիք՝ խորոված շերտամիս կանաչեղէնի հետ:
- Խմել՝ ջուր, բոյսով պատրաստուած թէյ:

Կարճ ժամանակամիջոցի ազդեցութիւնը Մանրութիւնը նուա-

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ


«Ազդակի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէ կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) Գերկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:



Կնոջական

ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆԵ

ԱՄԱՌՆԱՅԻՆ ԴԱՍԵՐԸ



Արձակուրդին երեխաները կը մոռնան տարուան ընթացքին իրենց սորվածներուն մէկ կարեւոր մասը: Լուծում. օրական քիչ մը աշխատիլ՝ զանոնք բոլորովին չմոռնալու եւ վերամուտին դժուարութիւններու չհանդիպելու համար:

Երեխաները, կ'ըսէ ծանօթ մանկավարժ մը, կը նմանին մարզիկներուն, իւրաքանչիւր մրցաշարքի եւ եղանակի աւարտին պէտք է մարզուին եւ պատրաստուին յաջողութիւն:

Ուրեմն, ծնողք - դպրոց գործակցաբար պէտք է երեխաները մղեն աշխատանքի՝ իւրաքանչիւր աշակերտի մակարդակին համապատասխան աշխատանքներ գտնելով:

Ամառնային աշխատանք տալ, թէ չտալ. օգտակար է, թէ տաղտկալի՝ աշակերտին համար... Տեսակէտները շատ են: Տեսնենք, թէ ի՞նչ կ'ըսէ ուսուցիչ - մանկավարժ ժան - Փիեռ Ժարուս այս մասին, իրեն հետ կատարուած հարցազրոյցի մը ընթացքին: Ժարուս ուսումնասիրութիւն մը կատարած է աւելի քան 2,500 աշակերտի վրայ եւ յանգած է որոշ եզրակացութիւններու:

ՀԱՐՅՈՒՄ. Ամրան ընթացքին աշխատած երեխաները աւելի փայլուն կ'ըլլան վերամուտին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Անկասկած, պայմանաւ որ երեխան հետեւողական կերպով աշխատի եւ աւարտէ իր աշխատանքը: Դժբախտաբար, հինգի վրայ մէկ հոգի միայն լրջօրէն կ'աշխատի ամառը եւ կ'ամբողջացնէ իր պարտականութիւնները: Բայց նոյնիսկ չամբողջացնելու պարագային, կատարուած աշխատանքը օգտակար է սորվածները բոլորովին չմոռնալու համար:

Ամառնային աշխատանքը պէտք է ընդգրկէ լեզուները, թուաբանութիւնը, պատմութիւնն ու աշխարհագրութիւնը, ասոնց գուզահետ պէտք է կատարուին յարակից ընթացքումներ եւ թանգարան այցելութիւններ:

Հ. Ծնողքին դերը ի՞նչ է:
Պ. Կարգ մը ծնողներ իրենք կը ծրագրեն իրենց զաւակին ամառնային աշխատանքը եւ միասնաբար կ'աշխատին: Ուրիշներ կը միջամտեն միմիայն սրբագրութեան ժամանակ: Նախընտրելի է, որ պատիկը առանձինը աշխատի եւ հարկ եղած ժամանակ ծնողները միջամտեն:

Հ. Ի՞նչպէս վարուիլ աշխատիլ մերժող երեխային հետ:
Պ. Եթէ ծնողները չկարենան համոզել կամ ստիպել, որ երեխան աշխատի, աշխատողներուն եւ փոքրիկին միջեւ գիտելիքներու բացը հետզհետէ կը շեշտուի:

Հոս տեղին է յիշել ծնողքին հեղինակութեան կարեւորութիւնը: Ծնողքը նախ եւ առաջ պէտք է երեխային համոզիչ ձեւով բացատրէ ամառնային աշխատանքին կարեւորութիւնը եւ այնպէս մը զնէ հարցը, որ երեխան ընդունելու կամ մերժելու ընտրանքին առջեւ չգտնուի:

Երեխան պէտք է հասկնայ, որ ամառնային արձակուրդը կ'ընդգրկէ խաղ, պտոյտ, համակարգիչ, հեռուստի, բայց նաեւ՝ դաս, ընթերցում եւ այլն:

Հ. Ի՞նչպէս աշխատեցնել երեխան:
Պ. Կան մասնագէտներու կողմէ պատրաստուած ամառնային աշխատանքի գրքիկներ եւ տետրակներ, որոնք մանկավարժական ձեւով կը մղեն փոքրիկը աշխատելու:

Կարելի է նաեւ փոքրիկին ուսուցիչներուն դիմել եւ անոնց կողմէ թելադրուած աշխատանքի մը հետեւիլ:

«ԱՉՂԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցեն հրատարակման թուականը առնուազն օր մը առաջ, Մինչեւ երեկոյան 5:00:

ՄԱՀԱՉՂՆԵՐԸ Բացառութիւն են: Մահագոյ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՓՈՐՁ ԸԱՐՅԱՐԱՆ

ԻՆՉՊԻՍԻՐՔ ԿԻՆ ՄԸ ՊԱՀՈՒԱԾ Է ՁԵՐ ՄԷՋ

Յաճախ մեր շրջապատին վրայ կը ձգենք տպաւորութիւն մը, բայց մենք կ'ըլլանք անոր հակապատկերը: Ծանչնալու համար մեր մէջ «քննարկ» կ'ընեն, պատասխանենք այս փորձ-հարցարանին, ապա կարգանք վերջնական արդիւնքը:

1

Եթէ հոգեկաւոր կին մը պիտի դառնաք, կը փափաքիք ըլլալ:
Ա. Նախարար:
Բ. Հոլիվուտի դերասանուհի:
Գ. Ողբիւրդի կանիտային:
Դ. Նոպէլեան մրցանակակիր:

2

Ի՞նչ է ձեր կարծիքը «բախտը կը ժպտի համարձակներուն» ասացածին մասին:
Ա. Զիջէ՛ք: Ան, որ չի փորձեր, չի յաջողիր:
Բ. Սխալ է:
Գ. Թերեւս ճիշդ է, բայց բախտը առանց սիրոյ ոչինչ կ'արժէ:
Դ. Մէկ բան յստակ է՝ երկուքով աւելի դուրսին կը յաջողիք:

3

Ի՞նչ գաղտնի փափաք ունիք:
Ա. Դրամատան մէջ մեծ գումար մը ունենալ:
Բ. Պատասխանատու պաշտօն մը ունենալ:
Գ. Ընտանեկան համբաւ կեանք մը ունենալ:
Դ. Արկածախնդրական կեանք մը ունենալ:

4

Անասունի վերածուելու պարագային, պիտի նախընտրէիք:
Ա. Մեղուներ:
Բ. Կարապր:
Գ. Յովազը:
Դ. Եղջիկը:

5

Ամայի կղզիի մը վրայ ձեզի հետ կը տանիք:
Ա. Սուզուելու յատուկ համազգեստ:
Բ. Խոհագիրներու գիրք մը:
Գ. Տետրակ մը՝ ձեր տպաւորութիւնները արձանագրելու համար:
Դ. Նորաձեւութեան ամսագրեր:

6

Կը յայտնաբերէք հին արկղ մը, ի՞նչ կը կարծէք, որ կը պարունակէ:
Ա. Կախարդական գաւազան մը:
Բ. Գոհարներ:
Գ. Պետական գաղտնիք մը:
Դ. Թագաւորական հրովարտողի մը:

7

Եթէ մէկ բառով դուք ձեզ պիտի նկարագրէք:
Ա. Անկանխատեսելի:

Բ. Կրթոտ:
Գ. Համակերպող:
Դ. Կազմակերպուած:

8

Արկածախնդրի մը պայուսակին մէջ անպայման կը գտնուի:
Ա. Թուղթ եւ մատիտ:
Բ. Հեռագրի ստակ:
Գ. Մկրատ:
Դ. Դաշոյն:

9

Բարեկամուհիներու հետ առաւելաբար կը խօսիք:
Ա. Երեխաներու մասին:
Բ. Գործի մասին:
Գ. Ձեր անձին մասին:
Դ. Ձեր ամուսիններուն մասին:

10

Եթէ բարեկամուհի մը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
a	4	4	4	2	2	4	3	2	1	1	4	1	3	3
b	3	2	2	1	1	1	4	3	2	4	2	3	4	2
c	2	1	1	4	4	2	1	1	4	2	3	4	2	1
d	1	3	3	3	3	3	2	2	3	3	1	2	1	4

ձեր վստահութիւնը չարաչար գործածէ:
Ա. Երկրորդ առիթ մը կու տաք անոր:
Բ. Նոյն ձեւով կը հակադարձէք:
Գ. Ձեր յարաբերութիւնը կը խզէք:
Դ. Կամաց-կամաց կը հետանաք անկէ:

11

Ձեր նախասիրած երկրաչափական ձեւն է:
Ա. Կլորը:
Բ. Քառակուսին:
Գ. Եռանկյունը:
Դ. Ուղղանկյուն քառանկյունը:

12

Դժուարութեան մը պարագային կը դիմէք:
Ա. Ձեր տրամաբանութեան:
Բ. Ձեր սրտին:
Գ. Բարեկամուհիի մը:
Դ. Ձեր ամուսինին:

13

Ձեր նախասիրած դերասանն է:
Ա. Շոն Գոնըրի:
Բ. Ալէն Տըլոն:
Գ. Ռիչարտ Կիր:
Դ. Սիլվիա Սթրալոն:

14

Ձեր հագած հագուստը պէտք է որ:
Ա. Արժեւորէ ձեր մարմինը:
Բ. Գործնական ըլլայ:
Գ. Հանգստաւէտ ըլլայ:
Դ. Ձեզ զանազանէ մնացեալ կ'իներէն:

ԱՐԴԻՆՔ

● Եթէ 1 - 18 կէտ հա-

ւաքեցիք, ձեր կեանքի նպատակն է ձեր հարազատները երջանկացնել: Յաճախ սրտով եւ ոչ տրամաբանութեամբ կը գործէք: Ընտանիքի տիրուէք, աշխուժ, խնդրալաւ եւ ճարտար, խնդրալաւ եւ ճարտար, խնդրալաւ եւ ճարտար, խնդրալաւ եւ ճարտար:

Թելադրելի է, որ ձեր մասին ալ մտածէք եւ դուք ձեզմով զբաղիք օրին մէկը զոչուսներ չունենալու համար:

Կրնաք յաջողիլ իբրեւ փայլուն ընկերային ծառայող, մանկամտերի պատասխանատու, բարեսիրական կազմակերպութեան գործօն անդամ եւ այլն:

● Եթէ 19 - 31 կէտ հաւաքեցիք, ուղղամիտ եւ միշտ իրականութիւնը փնտրող անձ մըն էք: Գործի մէջ եւ բարեկամներու հետ յարաբերութիւնները հիմնուած են փոխադարձ վստահութեան վրայ: Խստա-

պահանջ էք թէ ուրիշներուն եւ թէ ձեր անձին նկատմամբ:

Մտածելով կերպով արդիական գոհ էք, որ կ'ընեն որոշ չափով իրենց իրաւունքներուն տիրացած են եւ կը վարեն պաշտօններ, որոնք վերապահուած էին այրերուն միայն:

Կեանքի մէջ կրնաք փայլիլ իբրեւ դիւանագետ, քարգմաց, փաստաբան եւ այլն:

● Եթէ 32 - 44 կէտ հաւաքած էք, առանձնութիւնը սիրող էք, կ'ուզէք ձեր ուրախութիւններն ու յուզումները բաժնել ձեզի հասկցող անձի մը հետ: Խառնուածքով ընկերական էք, ներողամիտ եւ անշահախնդիր: Կը խուսափիք առանձնութեանէ եւ կ'ուզէք տեւաբար շրջապատուած ըլլալ: Մի մոռնաք, որ առանձնութիւնը երբեմն ներշնչում մի աղբիւր է, իսկ ուժի եւ ինքնավերլուծումի աղբիւր:

Կեանքի մէջ կրնաք փայլիլ իբրեւ բժշկուհի, ուսուցչուհի, հոգեբու թէ լրագրող:

● Եթէ 45 կէտ եւ աւելի հաւաքած էք, չէք հանդուրժեր շուքի մէջ մնալ, կ'ուզէք ամէն գնով Փաշտոնաբանութեան գրաւել: Ուշադրութիւն տեւաբար նորանոր յաջողութիւններու կը ձգտիք: Տեղաբայլ եւ միօրինակութիւնը կը զգուցնեն ձեզ: Կեանքի մէջ կրնաք փայլիլ իբրեւ հնագետ, աստղագետ, ֆիլիմարտադրող եւ լուսանկարիչ:

ԱՅԼԱԶԱՆ

ՀԻՆԱ

Շատեր այն սխալ կարծիքը ունեն, որ հինան անպայման կարմիր գոյն կու տայ մագերուն: Ո՛չ, կայ նաեւ անգոյն հինան, որ փայլը եւ թարմութիւն կու տայ մագերուն:



Փերմանանք ընդհանրապէս է գգուշանան բնական հինային, որ կապար կը պարունակէ: Կապարն ու փերմանանքի համար գործածուող դեղին ասիտ քիմիկալները հակառակ ազդեցութիւն կը գործեն եւ փերմանանքը սպասուած արդիւնքը չի տար: Կայ նաեւ արուեստական (սէնթէթիկ) հինան, որ ոչ մէկ վնաս կը պատճառէ փերմանանքին:



Վերջապէս, հինան թելադրելի չէ չէ կերուին: Նախ՝ աւելի կը չորցնէ անոնց մագը եւ չէ կ'ընայ կրնայ վերածել... ստեպիլին գոյնի: Մինչդեռ չազանակազոյն կամ սեւ մագերուն պարագային, անիկա շատ գեղեցիկ երանգ մը կու տայ:

ՅՈՒՆԻՍԻՆԵՐԸ

Պէտք է ճանչնալ յոգնութեան տեսակը: Կայ բնական յոգնութիւնը, գոր կը զգանք աշխատանքի մը աւարտին, կայ անբնական, սխալ յոգնութիւնը, որ կը զգանք տեւաբար եւ առանց արդարացուցիչ պատճառի: Առաջին տեսակը կ'անցնի հանգիստով կամ քնանալով, իսկ երկրորդը անբաժան է:

Երկրորդ տեսակի յոգնութեան պարագային բժիշկներ կը թելադրեն ուշ չքնանալ, յաւելեալ կենսասնիւթեր սպասել, հաւասարակաշուռուած ուտել, մարզանք մը կ'իրարկել եւ ծխախոտը դադարեցնել:

Այս բոլորէն ետք, արդիւնքի չհասնելու պարագային, պէտք է բժիշկին դիմել, քանի որ պատճառները այլազան կրնան ըլլալ, ինչպէս՝ քունի խանգարում, հոգեկան անկուտ, երկկամային հարց:

ԻՆՉՊԵՍԻՐՔ ԲԱԶՄԱՏՆԵԼ ՍԵՆՏՓՈԼԻԱՆ

Մէջնափոխան մուտք մանիշակազոյն ծաղիկներով եւ թաւաքով տեւեւներով գեղեցիկ բոյս մըն է: Ջայն բազմացնելու համար նախ եւ առաջ զմելիով պէտք է կտրել անոր առողջ կեղծոնի տերեւները՝ իրենց ցողուններով:

Դարձեալ զմելիով ցողունները կտրել տերեւէն 3 սմ. երկարութեամբ:

Եզերով ամանի մը մէջ քիչ մը ջուրին հետ խառնել հաւասար քանակութեամբ աւազ եւ «թէրօ», ցողունները 1,5 սմ. խորութեամբ մխրձել հողին մէջ, ապա ամանը անցնելու հալլը տուրապի մը մէջ եւ լուսաւոր եւ տաք (20 աստիճան) անկիւն մը գէտեղել:

ԽՈՒՍԱԳԻՐ

ԴԱՓՆԻԻ ՏԵՐԵՒՈՎ ՀԱԻ

- Բաղադրութիւն
- 1,5 քիլօ կշռող հաւ մը
- 800 կրամ մանր գետնախնձոր
- 400 կրամ կեռասի մեծութեամբ լոլիկ
- Գլուխ մը սխտոր
- Դափնիի 4 տերեւ
- 4 դգալ ձիթախիլ
- Աղ, սեւ պղպեղ

Պատրաստութիւն

Գետնախնձորները կեղուել, չորսի բաժնել եւ նախընտրաբար շոգիով եփել: Փուռը տաքցնել 180 քերմաստիճանով:

Դափնիի 2 տերեւ տեղաւորել հաւու մորթին տակ, հաւը աղել, համեմել, ապա տեղաւորել փախէի մը մէջ, որուն յատակը 5 սանթիլիթը ջուր դրած ըլլաք: Սխտորին գլուխը երկուքի կիսել եւ հաւուն երկու կողմերը գետեղել:

Ամանին մէջ ծալրը լեցնել շոգիով եփած գետնախնձորները եւ դափնիի 2 տերեւները:

Երեսը տարածել ձիթախիլը, աղ ու համեմ, աւելցրել եւ շուրջ 1 ժամ փուռին մէջ եփել՝ մերթ ընդ մերթ հեղուկէն դգալով հաւուն եւ գետնախնձորին երեսը աւելցնելով:

Փուռը դնելէն 20 վայրկեան ետք փախէին մէկ ծայրը աւելցնել լոլիկները եւ շարունակել եփել: Եփելէն ետք հաւն ու բանջարեղէնները փոխադրել ներկայանալի ամանի մը մէջ, իսկ փախէին մէջ աւելցնել 5 սանթիլիթը ջուր եւ խառնել՝ քիչ մը նոսր թացան ստանալու համար: Թացանը փոխադրել փոս ամանի մը մէջ եւ սեղան բերել:

Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՄԱԻՍԱԳԱԼԵԱՆ

